ՃԱՆԱՊԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՈՒԱՐ ՃԻՑԷՐՃԻ ՕՂԼՈՒ ՔԱՀԱՆԱՅԻ

(Տես երես 129, 180, 202։)

Յորժամ կամիս սեղանատունն երթալ, ունի և վերս ելանելն տասնուեօթը ոտք մէրտիվէն. կայ մէրտիվէնին դըլուխն 4 օտայ աջ կողմն. ձախ կողմն գինեատան մեծ պաճան, լայն և արձակ, և առաջ գնաս՝ 8 ատրմ փոքր դուռ մի. եօթը ատրմ այլ յառաջ՝ փոքր քէմէր դուռ մի այլ. ինը ատրմ այլ առաջ՝ դուռ մի այլ, կ'ելանես դուրս, տասնուինը ատրմ մինչև'ի սեղանատունն. ձախ կողմն Զիթատուն, խոշոր ֆչիներ, որ գէթունն անդ սալամուռ են արել, և այլ մութվախ. պիտոյ եղածն անդ են եղեալ. և ունի օտայ մի այլ ներսի դիհն, և կայ սորայ մէջն և առատ հոր մի. որոյ դուռն առաջևն մինտէպէր պաճայ մի, որ գինէատանն վերայ է, ներքևն թէլով քսան աչք ունի. և կայ անդ դուռ մի որ տանիսն կու ելանէ. ունի մէրտիվէն տասուիրեք ոտք, լայնութիւն հինգ թիզ։

Գնանք 'ի սուրբ Առաքելոց եկեղեցին. երկայնութիւնն տասուիրեք ոտք, լայնութիւնն տասնումէկ ոտք. խորանին լայնութիւնն տասնուչորս թիզ. ճակատ խորանին ինը թիզ. յետոյն ունի պատուհան մի, թէք ղանատով ճամը. խորանին առաջևն մէկ ղատէմէ քար և ունի երեք տոլապ. վերայ տօլապին երեք սնտուկ և կայ բարձր տեղ խաչելութեան պատկեր մի քարէ օյուլմիշ եղած. ձախ կողմն սուրբ Նշանին վերի դուռն է և ունի մէրտիվէն 23 ոտք. և եկեղեցնայ դուռն ներսի դիհն մէկ ղատէմէ, դրան բարձրութիւնն վեց թիզ, լայնութիւնն երեք թիզ. ունի դռան դրսի դիհն բակ մի չամչարսը. եօթը ատրմ լանքն և երկանքն. այս սրան երկու բէնճէրէ ունի սուրբ Յակոբ. և դիմացն կայ փոքր դուռ մի որ հոգևոր տիրոջն օտան կու իջանէ. տանիսին երկայնութիւնն 70 ատրմ, լայնութիւնն 94 ատրմ, և զուպպէն բարձր քան զամենեսեան. մէջ տեղն բաց է և դաֆէս թէլով երկաթ պարմախլըխով. ունի քսանուչորս կամար, և քառասունութը մարմարիոնեայ բարակ սիւն. Այս որ կայ՝ չորս կողմն պէյան կ'անէ. տանիսին արևելեան կողմն կու հայի դէպ 'ի Համբարձում, և դէպ 'ի տաճարն Սողոմոնի, և 'ի վերայ ընդհանուր քաղաքին, և 'ի դէպ հրեշտակապետ. հարաֆային կողմն կու հայի Ս. Յակոբայ բակն, դէպ 'ի նոր շէնքն և ներսի պաղչան, և դէպ 'ի Փրկիչ մինչև 'ի Ս. Եղիա, որ անտի դընանք ծնունդ. այս կողմն ունի երեք փէնճէրէ սուրբ Յակոբ. արևմտեան կողմն կու հայի սուրբ Յակոբայ դռան առջև ասխարևի և պախչաներն, դէպ 'ի սուրբ անարծաթ կոզմաս և Դամիանոս. և մեծ պիւրքէն[1] որ բերդէն դուրս է, որ տաճկի գօռերն է. ամէն հինգշաբթի քաղաքացւոց տաճկի կնքտիքն գնան անդ չատրներով կերակրով սաֆ սաֆ նըստին, թիւթիւն չպուխներն 'ի բերանին, Դալլի ղուլէ ասելով մէկ մէկ չարչաֆի մէջ են փաթտուեր, թէ հարուստն և թէ աղքատն. մինչև յետինք անդ նստին. միւս կողմն էրիկ մարդիք ոմն տամպուռայով, ոմն ջուրն ըմպելով չարսը պաղար կու լինա։ Այս պիւրքէն կոստանդիանոս շինեց, որ սորայ ջուրն տեղ ունի կ'երթայ քաղքին մէջն՝ Պէրպէր Պետրոսին ղանութին քովն պիւրքէ մի այլ կայ որ վերոյ գրածիս մէկ քիչ փոքր է. և սորայ քովէն գնաս խաչավանքն։ Եւ այս սրան կայ եաղլըխ մի որ վերան քիրէմիտով ծածկեալ է. լայնութիւն չորս ատրմ. երկայնութիւն 7 ատրմ. և ունի լուսամուտ չորս. բաղում անգամ անդամ անդ նստաք ուրախութիւն ապրաք. առաջևն բաց և կայ անդ հանդըստարան մի։ Գնամք հարաֆային կողմն. կու հայի Թումայի առաքելոյն ծախսուած տեղն. իւղաբերիս կանանց տունն, բերդն, որ է Դաւթայ մարգարէին սէրայն. սուրբ Յարութեան ղուպ-

[1] Ջրի Համբայ կամարակապ։

պէն և զանգակատունն ։ Այս կողմն ճանապարհն գնա դէպ 'ի Նապուլուս, և կայ աստ պաճայ մի, որ զատկի առաջին օրն սուրբ Յարութենէն կու գան ըխտաւորքն մեծ և փոքր, ծեր և տղայ, անդ կ'ուտեն զկերակուրն մէհտէրհանայով, և այն պաճայէն տան զկերակուրն 'ի վեր. ուտեն և գոհանան ըղտեառնէ և ապաարձակեն զժողովուրդն։

Իջանեմք 'ի վայր և գնամք 'ի մութվախն 'ի ներս. և ունի քիլէր իրեք, և ունի փէքէ մի. եօթը ոտք մերտեվէնով վեր ելանեն. մէջ տեղն հալաթով մեծ չէնկէլ մի, որ ոչխար կու կախեն. և ունի երկու լուսամուտ, և կայ 'ի դրանն քով հացի փուռ, տէզկեահն 14 ատրմ երկայնութիւնը, չորս ատրմ լայնութիւնն. խըմորին դաշտին երկայնութին տասն ատրմ, և ունի երկու լուսամուտ. մութվախին լայնութին 10 ատրմ, երկայնութիւնն՝ տասնուհինգ ատրմ. երկու խոշոր քէմէր և ինը օճախ. անդ կայ խոշոր ղազաններ թող զմանր մունարն. և տօլապ տասն մանր և խոշոր և ունի լուսամուտ վեց. դրանն քով է աշճի Մինասին օտան. 'ի մտանելն սեղանատունն աջ կողմն քիլէր օտասին. ձախ կողմն կանանց սեղանատունն. ներքևով վերայով նոցա մարապետներն խզմէթ կ'անեն. դրան քով օթուրախի մի կայ որ ուտիք օրերն անդ դնեն մեծ թասով ըրախի և գաւաթ բաղում, որ ըխտաւորք և միաբանք մի մի խմեն զրախին և երթան ներս. կանանց նստած տրապիզոնին քով՝ ամպիոնին մէրտիվէնն է. անտի ելանէ 'ի վեր եթէ ով է որ ընթեռնու զճառնտիրն. և մի դուռ այլ կայ, բարուճդ հան և մուտ ներս ։ Եւ անդ է սեղանապետն կանգնեալ. ամէն մարդ եօլով՝ տեղն 'ի տեղն նստուցանէ. կարգաւորք մի կողմն. աշխարհականք մի կողմն սրայով բազմեցունելուն յետոյ՝ մէկ մէկ թաս վռօշ և երկու հաց մարդ գլուխ, մինչև 'ի տիւշմէնն. երկու կողմէ խոշոր իպրիխով գինի կու լեցընէ քովն միաբանին, մէկն գաւաթն 'ի ձեռին, հէմ կու տայ հէմ կու ժողովէ. մինչև նոքա զկերակուրն ուտեն՝ բարձր տեղն այն ճառնտիրն կու ընթեռնուն. յորժամ ուտեն և լըմընցընեն՝ կայ անդ զանգակ մի որ սեղանապետն կու քաշէ. ձայնն ելածին պէս մեծարոյն ոտաց վերայ կու կանգնի. և միաբանք յետ նորա. սկսի զՀայր մերն ։ Մինչև երեք օր ինը ըխտաւորք կերակրեն. և այլ ոչ ։ Սեղանատան երկայնութին քառասուն ատրմ և լայնութիւնն ինը ատրմ և ունի եօթն լուսամուտ, և կայ մեծաւորաց նստել տեղն լուսամուտի առաջէն շատրուան մի. և կայ ճակատ սեղանին սուրբ աստուածածնայ պատկերն. ցախ կողմն Պետրոսի առաքելոյն և աջ կողմն Պօղոսի առաքելոյն. և կայ սեղանին դէմ քէմէրին ներքև Ս. Ստեփանոսի պատկերն. և ձախ կողմն վերնատան սեղանի պատկերն տասներկու առաքեալք և Քրիստոս 'ի միջի նոցա պայծառ դէմք. և 'ի միջի սոցա այն անիծեալ Յուդան մէկ ձեռօքն զմօրուքն փռներ դարշ երեսօք կու հայի դէպ 'ի Քն. Աճէմ տիրացու մահտեսի Միքայէլին քաշուածն է. Աստուած ողորմի իւր հոգւոյն ։ Եւ աջ կողմն դէպ 'ի վայր որ սեղանատանն մէջ տեղն է՝ կայ երկաթ դուռ մի որ ժամանակաւ Ոսկէ ղափուճի պաշի են բերեր 'ի վերայ Եղիազարու. գիշերով այս երկաթ դռնէն կու իջանէ պախչան և կու փախչի. և մէկ գիշերն կու իջանէ Ղազայ հասան փաշային քով կ'երթայ, տախիլ կու լինա. և անտի կու չուէ Ստամպօլ. կ'երթայ Քօփրիլէյին քով. ոմանք կ'ասեն թէ հիմի զվիզն կու զարկնէ կամ կու կախէ. նայ տեսնես անկարծակի հազեր զկապան դուրս կու ելանէ. կրկին զսուրբ Յակոբ Յունաց ձեռաց կու առնէ ։ Այս անիծեալ հռոմք տասնուվեց ամիս զապտեն արեր խաբէութեամբ. աստ ունին փոքր եկեղեցի մի սուրբ Յակոբ անուն. զընան Ստամպօլ նորա մահանայով էմր կու առնեն և կու գան զապտ կանեն. յետոյ 'ի գնալն Եղիազար կաթողիկոսին ղաւլն կու հասկցնէ հաքիմին, կրկին կ'առնէ և յետ կու դառնայ. եղբայր, 200 քէսէ կ'երթայ այսմ իրի. մէկ խօսաց համար է այնպէս իմացիր ։

Եւ տանիսին մեծ դռանէն քով քէ-
մէր մի վեց ատրմ. անդ է սեղանին կոչ-
նակն. և կայ երկու կողմն երկու օտայ.
տասը ոտք յառաջ փոքր քէմէր մի. սո-
րայ յառաջ կայ պաճայ մի երկաթ փէն-
ճէրէյով, տանուհինդ աչք վերան թել
հիւսած. ձախ կողմն մին օտայ. աջ կողմն
ղօրխմաղին օտան. կայ առաջին փոքր
մէյտան մի. և անդ մեծ օտայ մի, որ հո-
գևոր տիրոջ օտայ կու անուանուի. ունի
երկու կողմն սէթ վեց վեց քարէ ոտքի
վերայ, և տրապղանով։ Եւ կայ աստ մեծ
սահաթ մի կախեալ, և չէքիձն վերայէն
կու զարկնէ։ Մուտ ներս, մեծ և լայն օ-
տայ մի. և ունի ճակատն փէնճիրէ մի
մեծ ճամ չէրչիվէյով. անդ կայ ղազ-
նայի օտայ մի, որ ըխտաւորաց ինչ որ
առնեն՝ թէ իփէկ, թէ էպիրշում թէ
չուխայ, թէ սոֆ, թէ էպրու թէ կտաւ,
թէ խալի, թէ սարըխ, թէ գոտի և թէ
մէսդ պպուճ, թէ սահաթ, և դշիր, թէ
շալ, և թէ քէսէ. թէ քիւրք թէ պօղմայ, և
թէ պիլէզիք, թէ դանակ թէ քէմէր, հալ-
հալ, թէ ըռահտ և թէ շէնկի՝ թէ գիրք,
զամենն անդ դնեն. և բանալին մեծաւո-
րին վերայ է։ Եւ կայ անդ երկու աթոռ
դիմացէ դիմաց և քոշն տրապղան. և անդ
կայ փէնճէրէ մի գուբ տեղ, անդ դնեն
դգինուն փարչն և ջրին. և դիմացն օ-
թուրախ մի. և ունի քոշն բարձր տեղ
պատուհան մի. և 'ի ներքևն փոքր դուռ
մի. դուրս ելնելն 'ի բաց՝ փոքր սուֆայ
մի և է քոշն սահան շարելու տեղ, և
սորայ քոշն փոքր մութվախ մի. և սո-
րայ քով հանգստարան։

Ել անտի գնամք 'ի մեր ճանապարհն.
կայ փոքր տեղ մի երկայնութիւնն ինը
ոտք և լայնութիւնն հինգ ոտք առաջին
տարապլոն. սորանէ վայր նայիս՝ Գրի-
գոր վարդապետին երկու օտային վե-
րայ կու հայի, սոքայ հաբեղաթաղ
կու անուանի։ Այսուհետև ըղորդ դէպ
'ի ներս գնամք որ տիրացու Աբու-
թինին օտան է դէմն ունի մէրտիվէն.
յետոյ գալոց եմք աստ. կայ սորայ քոշն
նեղ ճամբայ մի քսանուհինդ ատրմ
երկայնութիւնն, չորս ոտք լայնութիւնն.
աջ կողմն ունի ութը օտայ, ձախ կողմն
ունի վեց օտայ. ճակատն կայ դուռ մի.
'ի մտանելն 'ի ներս ձախ կողմն փոքր
օտայ մի որ միջէն ճանապարհ ունի
տանիսն ելանել. և կայ փոքր մէյտան
մի երկայնութիւնն 10 ատրմ, և լայ-
նութիւնն ութը ոտք, վերան բաց. և
կայ փոքր սէթ մի պարմախլըխով, որ
անդ կանանչ են ցանեալ։ Ապա մուտ
վէքիլին օտան. դռան մէջն փոքր բա-
բուճի տեղ. և 'ի մտանելն ներս՝ մեծ
օտայ մի երկայնութիւնն տասը ատրմ
և լայնութիւնն հինգ ատրմ. և կայ ճա-
կատ օտային քէմէր շահնիշիր մի, և
փէնճերէ մի վեց խոշոր ճամով, և պա-
տէն դուրս երկաթ փէնճէրէ որ 'ի դէպ
պաղչան կու հայի քսանուհինդ աչք ու-
նի և թելով հիւսեալ է, որ ըխտաւորք
սուրբ Յակոբայ դռան առաջև ինչ որ
ունին առեստուր, և մեծաւորն անտի
կու հայի. միւս կողմն փրկչայ ճանա-
պարհն կու հայի և կայ քոշն երկու փէն-
ճէրէ այլ. և կայ անդ երկու աթոռ դի-
մայէ դիմաց, և կայ դուռ մի տօլապի
նրման։ Մուտ 'ի ներս և կայ փոքր մայ-
պէնկ օտասի մի, լայնքն և երկանքն
հինգ ատրմ. չամչարշի. և ունի լուսա-
մուտ մի ճամ փէնճէրէ ութը աչք են.
և ելանես անտի ձախ կողմն փոքր մութ-
վախ մի որ մեծաւորին կերակուրն աստ
կու եփեն, և ունի երկու լուսամուտ. և
կայ աստ նեղ մէրտիվէն մի տանու-
մէկ ոտք. կու իջանէ 'ի վայր. կայ օ-
տայ մի որ փոքրաւորք կու պառկին մէկ
լուսամտով. կայ օտայ մի այլ որ սէթ
ունի, և մէկ լուսամուտ մի. և կայ դուռ
մի և սորայ առաջին մայպէնկ տեղ մի
սէթով երկայնութիւնն ութը ատրմ.
սէթին լայնութիւնն ութ ոտք. և կայ
ճակատն փէնճիրէ մի ճամ չէրչիվէյով
ութը աչք խոշոր ճամ. սայ ևս ունի պա-
տէն դուրս երկաթ փէնճէրէ քսանրու-
թը աչք. և թել ղաֆէսով. և կայ աստ
օտայ մի սայ ևս վէքիլ օտասի է. ու-
նի երկու փէնճէրէ որ դէպ 'ի կոչնակն
կու հայի. և կայ պէօլմէ փոքր օտայ մի
որ վէքիլին եկած փէշքէշն անդ վերցը-
նեն. և կայ այս օտային մէջն երկու
պատկեր Ծընդեան սիրուն և դեղեցիկ

քաշուած . կայ աստ մերտիվէն մի . սո_
րայ գլուխն ղահվէ օճաղը մի . 12 ոտք
է մերտիվէնն , և զէմպէրէկին չուանն
քէմէրին օրթայ տեղացն է . որ ղաֆիլ
կու քաշեն . և չիգիտցողն շաշմիշ կու
լինայ թէ ուստի քաշեցին : Եւ կայ այս
դուան քով փոքր դուռ մի այլ , որ Պա_
պա Մինասին օտան է . սորայ համար
շատ ճէրիմէ տրուած է . զիրա յետոյ է
շինած և այժմուս փակ է : Եւ ելանեմք
'ի վեր . դուրս ելիր վէքիլ օտասյէն .
աջ կողմն ճկէ , նեղ ճամբայ մի երկայ_
նութիւնն տասնրութ ատրմ լայնու_
թիւնն իրեք ոտք . ճիհայէթլի փոքր մէյ_
տան մի , վերան բաց և կայ աստ չորս
օտայ և կայ փոքր քէմէր երկու . և սորայ
կից Պապայ Մինասին օտային պատն .
սորայ դիմաց համդստարան . և կայ քո_
վըն հոր մի . և է սորայ քով ցած պատ
մի որ վերէն սուրբ Յակոբայ բակն կու
նային . և սորայ դիմաց տանիս մի եր_
կայնութիւնն 40 ատրմ . լայնութիւնն
տասնուչորս ատրմ . կայ աստ ամալըխ
մի : Յետ դարձիր գնա , տիրացու Յա_
րութիւնին օտային դիմացի մէրտիվէ_
նէն վար իջնիմք . իրեք պօյմէ է , միջի պէօ_
լիւկին կայ պատուհան մի որ գիշերն
կանթեղ կու վառի աջ կողմն մութ
տեղն հինգ օտայ իրեքն սուրբ Յակոբայ
բակն կու հայի . երկուքն ռօխախին վե_
րա կու հայի . այս իրեք պօյիւկ մէրտե_
վէնն ընդ ամէնն քսանուհինգ ոտք է ,
և քովն տրապըզան . կու իջանէ զինէ_
տանն մեծ դռան առաջին . որ զինի
բաժնած ատենն ըխտաւորայ ղայն դու_
ռըն կու բանան , անտի կու բաժանեն .
և կայ սորայ քով փոս օտայ մի : Եթէ
հարցանես եղբայր , ընդ ամէնն թէ մեծ
և թէ փոքր՝ 280 օտայ է և մեր տկա_
րութեանս հարևանցի գրեցի անմեղա_
դիր լերուք . և ղայլ ըստ պատշաճի յայտ
առնելոց եմք Աստուածով . ամէն :

Սուրբ Յակոբայ դուրս ելանես՝ կա_
միս գնալ սուրբ փրկիչ , ձախ կողմէն .
երբեմն պաղչայէն կու գնաս . բերդէն
դուրս ելանելն 'ի բաց ուղիղ գնաս , որ
հինգ ոտք մէրտիվէն վեր ելնես . և աջ
կողմն կայ վանից պաղչան որ մէջն ու_
նի վաթսունըմէկ զեթունի ծառ , բո_
լորն պատ շարած : Եւ անտի մտնուս
գերեզմանատունն , չուրջ դալն[1] 'ի բաց,
տեսանես որ եկող Ստամպօլու ըխ_
տաւորաց որ աստ հանգուցեալ են ,
զնոցա գիրն ընթեռնելով և հոգւոյ ա_
սելով և ոմն օրհնելով , և մէկ քանի
փարայ այլ աստ միւմքէթի[2] եղաք .
բայց ծընընդեան մեռելոցի՝ լման քը_
սան փարայ գերեզման օրհնէքչէք
վաստակեցայ . Աստուած չէն պահէ
պժողովուրդն . այն աւուր ճէրիֆանէն
ելաւ : Բայց կայ մէջտեղն մեծ ճարմա_
նի պէս քար շարեալ կլոր . ժամանա_
կաւ անդ լուս կու իջանէ , Սիոնցիք ըղ_
քարն այն շարեալ են , թէ այս մեղա_
նից է ասելով , պայն ալ զապտ են ա_
րել . հիմայ ըխտաւորք նորա է հեռու
կու անցնին : Եւ յառաջ գնաս որ սուրբ
Աստուածածնայ փոխման տեղն է . ա_
ռաջմանէ չէն և շինուած է եղեր և այժ_
մուս ղարապայ է , միայն թէ ցած պատ
մի մինչև 'ի մարդոյ կուրծքն կու հաս_
նի , խոշոր քարեր . ղայն տեղ կու համ_
բուրեն և աղերսեն : Եւ է սա 'ի դիմաց
սուրբ Սիոնի , որ անդ է վերնատունն
ուր Քրիստոս պատարագեաց և աշա_
կերտաց զոտն լուաց . ունի յիսնևտասն
ոտք մէրտիվէն . 'ի վեր ելանելն և կայ
մեծ բակ . աջ կողմն կու ճրկիս՝ վերնա_
տանն դուռն է . և 'ի ներս մըտանք տե_
սաք զվերնատունն , որ անդ ասաց ա_
ռաքելոցն թէ Առէք կերէք . կամ թէ
Արբէք խմանէ ամենեքեան . և այլ ներս
փոքր վերնատունն , ուր Հոգին սուրբ
իջաւ և հանդեաւ առ յառաքեալսն . և
ուր Թովմաս եսես և հաւատաց և ա_
սաց թէ տէր իմ և Աստուած իմ՛ . և
ունի դրսի կողմն աջ դիկն եօթևտասն
ոտք մէրտիվէն . ներսի կողմանէն որ
կու իջանէ 'ի վայր՝ և անդ է գերեզման
Դաւթայ մարգարէին , և որդւոյն Սողո_
մոնի , և Սիմէոն ծերունւոյն . և տեղին
ուր տապանակն եդ Դաւիթ . և անդ գե_
րեզման Ստեփանոսի նախավկային . և

1 Շրջապատն :
2 Շահիլ, վառելիլ:

մերձ է սուրբ փրկիչ սուրբ Սիոնի վանք Հայոց, և կայ սիրուն եկեղեցի երկայնութիւնն ... առըմ, և լայնութիւնն .. առըմ. և անդ է կափարիչ վէմն աստուածընկալ սուրբ գերեզմանին, զոր հրեշտակ թաւալեցոյց, այն է տունն Կայիափայի քահանային, այս վէմն խորան կազմեալ հանապազ պատարագ մատչի 'ի վերայ սորօյ. և երեք տեղ կնքեալ է՝ իրաւի որ սուրբ աւետարանն հրամայէ ասելով, թէ էր մեծ յոյժ, եղբայրք, եթէ հարցանէք դէւտիւր[1] կայ մեծի և փոքու որ ելանէ և համբուրէ փափաքանօք. և խորանին ձախ կողմն է բանտն ուր զՔրիստոս արկին և կապեցին 'ի սիւնն. և է բանդին երկայնութիւննն ինը թիզ և լայնութիւնն հինգ թիզ և կէս։

Եկեղեցւոյ դուրս ելանելն՝ որ 'ի գաւիթն է, աջ կողմն լուսաւորեալ հոգի Գրիգոր պարոնտիրի գերեզմանն է միայն, որ բարձր սէթի վերան հանգուցեր են. և ունի վերան բարձր նորաշէն կամար մի, որ Մահտեսի Օտապաշի Գրիգորն շինեալ է, և ունի յիշատակարան. և ձախ կողմն կայ սեղան քար մի ուր Պետրոս ուրացաւ անդէն. և առժամայն հաւ խօսեցաւ. եարաճ խօրօզճ գրեալ է 'ի պատի անդ քարի վերայ. և սորայ քովն է Աստուածատուր վարդապետին գերեզմանն, մէջ տեղն Յովանէս վարդապետին գերեզմանն է որ մականուամբ Նօխուտ կոչիւր, միւս կողմըն Մինաս վարդապետին գերեզմանն է, որ մահտեսի Անտոնն շինել տուեր զամենայն իրսն և յիշատակարան գըրեալ կայ. և կայ 'ի դիմաց սոցա թուրունճի ծառ մը սիրուն. և յատակ ծառոյն բոլոր քարով շինած, և մէջն հող բարակ։ Եւ ունի այս վանքն օտայ քըսան, և բարձր տանիսով սըրտբաց. եթէ կամենաս, եղբայր, մէկ քանի եարաճ[2] չուռճաճեաճ[3] տեսնեն և դինին ընդ նմա, գնան Նըստին 'ի տանիսն և ճաշակեն մինչև յերեկոյ և ապա գան վանքն։ Եւ անտի վայր տեղիք հաւաչման Պետրոսի առաքելոյն յետ ուրացմանն։

Այսուհետև իջանեմք դէպ 'ի վայր մինչ որ հասանեմք այն տեղին՝ որ Գետսամանի կոչի. անդ է գերեզմանք Անդեայ և Ջաքարիայի մարգարէից. և 'ի վերայ լեռան բարձր, գերեզման Կիւրղի Երուսաղէմայ հայրապետի. և անտի յառաջ եկեղեցին սրբոյն Սարգսի զօրավարի որ այժմ հանգուցեալ է, և սորայ վերովն բլուր մի շինած, որ Աքեսողմի բլուր կոչի. և որոյ դէմն աշտարակն է եղեր, որ սուրբ Յակոբ ընկեցին 'ի վայր և թափիչքն թօխմախով սպանին. որ այժմուս ոտնատեղն կայ փոս, որ ըխտաւորք համբուրեն ամէն գնալու։ Եւ անտի 'ի վայր 'ի մէջ ձորուն շատ յառաջ աղբիւր Սելովամայ. լայն վերտիվէն եօթն և տասն ոտք. իջանես 'ի վայր մէրտիվէնին ներքևին կուգայ ջուրն. օրն երեք անգամ կու գայ և գնայ. որոյ դիմաց է Յուդայի գիւղն, և աստ բժշկեաց և լուսաւորեաց զծընէ կոյրն որ անունն է Սետոնիոս. գնաս յառաջ և 'ի վեր ելանես Եսայեայ մարգարէին գերեզմանն, որ անդ սղոցեցին. և 'ի դիմաց սորայ Ագարակն բրուտի գերեզման օտարաց, որ է ճառներ Հայոց ազգին զոր Քրիստոսի արեան գին արծաթով գնեցին։ Եւ անտի 'ի Աբբայ հորն, և է անդ ճավուզ մի, երկոտասան կանգուն լայնութիւնն, նոյնպէս և է սորա կից Ղարաալա վճարելու տեղ մի. և կայ հավուզին քով փոքր ղուպպէով շինած և ցած դռնով և երկուպատուհանով, ներքևն քէմէրով խուղ մի. և 'ի սորայ ներքևն է Աբբայ հորն. առաջին եղանակին գնացաք. այնչափ խոր է որ տեսողաց յայտնի է. և ունի առաջեն ճէյրաճ մի ակթ, և 'ի սէթին ճակատն ունի ակ մի որ լայնութիւն երկու արշուն և կէս կայ, հորն մինչև 'ի բերանն լցեալ է, և 'ի ներքուստ ելանէ ջուրն այն. և ունի ճանապարհ որ գնա ինչ 'ի Մեռած ծովն, և կայ 'ի գնալ ջըրոյն եղերն բազում զեթունի ծառ որ լեզուաւ չի պատմիլիր. եղբայր, այս Աբբայ հորն ամէն տարի չի տաշմիչ լի-

1 Հրաման, Թոյլտուութիւն։
2 Ընկերք,
3 Ուտելիք։

նար, այլ չորս տարին կամ հինգ տարին անճախ մէկ հեղ տաշմիչ կու լինայ. ապա ողորմութեամբն Աստուծոյ 'ի մեր գալն 'ի սուրբ յԵրուսաղէմ այն տարին անչափ անձրև եկաւ որ խակի չէ եղեր. մինչ որ ձիւնն իրեք կամ չորս թիզ նստաւ ։ Ցունվարի 'ի չորս օրն երկուշաբթի սուրբ փրկիչ ժամ եղաւ. յետ ժամուն գնացաք 'ի Աբբայ հօրն. քանզի պատրաստութիւն տեսեալ էաք. այն տեղն իջևանեցաք 'ի մաղարայ միէ որ առջևն բաց և յետոյն մուրվախ է և անդ նստաք բազում ուրախութիւն արարաք, և յետ ուրախութեան՝ չուրջ եկաք գնալով բարձր և աւանդակ տեղ մի նստաք, որ դէպ ջրին վերայ կու հայի 'ի հեռաստանէ. և 'ի յառաջ ջրերին եղեալ ֆէլլահներն այր և կին թամաշա արաք ։

Եթէ կամիս, եղբայր, սակաւ մի պատմեմ ձեզ. այս սուրբ Երուսաղէմացիքս գվազան ջուրն չեն տեսեր այլոց քաղաքի պէս, իւրեանց տունն աղտի մէջ կորուսեալ են. զիրա ջրէ կարօտ են. եղբայր, տես մեծն և փոքրն այր և կին ծեր և տղայ, ոմն կարպետ ոմն եօրղան, ոմն չուռվալ, և ոմն տօպրակ, և ոմն ձիու չուալ, և ոմանք ցեղ ցեղ չորեր առեալ վազեն դէպ 'ի ջուրն. ոմն չալկեր և զովան 'ի ձեռին ունելով, և ոմն 'ի վերայ իշուն բարձեալ և ոմն 'ի ջորուն և ոմանք 'ի Ցաճկաց կերակրոց սաֆ սաֆ նըստեալ 'ի քարատակնին զէվք անելով. ոմանց գլուխն ցած թարփօշով, և ոմանց գլուխն հաւլօզով. մէկ մէկ ճերմակ սաւանով. և թիւթիւնի չըպուխն 'ի բերան ունելով ղալի-ղուլէ քարքանջելով. կանայք զատ, էրիկ մարդն զատ. և ոմանց հայ էարաններն զումանեայ տեսանելով գնան ջրէն հեռու ծառատակ մի նըստին, և ծածուկ ուրախութիւն կ'անեն ։ Այս ջրի միջի եղեալ ֆէլլահներն մէկզմէկի այնչափ առարկութիւն կանեն որ խակի չի լինար. եթէ աստ էիր լեալ և տեսանէիր, հէլվաճին հօն, թիւթիւնճիւն հօն, ղահվէճին հօն, իւզումճին հօն, հալխճին հօն, չէրպէթճին հօն, այսքան առ այս ։ Եւ 'ի սորանէ վայր՝ շատ հեռու չէ կայ տեղ մի որ գետնէն ջուր կու բըխէ, ճերմակ աւազէ. սորայ անունն արապի Այն-էլ լօղէ կ'ասեն, որ թարգմանի ակն նշի ։

Այսուհետև, եղբայր, բռնէ զճանապարհն ել 'ի վեր, չիտակ ճանապարհով գընաք 'ի Բեթանիա, ոմն ձիով, և շատերն հետևակ, ոմն կէօշ ցաթկելով և ոմն ծեր գաւազանով. մինչև 'ի գերեզմանն Ղազարու, և առջևն բաց տեղ մի, և յետևն գիւղն աւերակ է, և կայ նեղ ճանապարհ մի, մի կողմն բարձր՝ միւս կողմն ցած, սորայ մէջտեղն է գերեզմանին դուռն փոքրիկ. ֆէլլահներն աքվայով[1] կանգնած ըխտաւորքն այնչափ կու թափին վերայ որ ասեղ ձգես չի ինկնիր. եկ տես որ Ըստամպօլու փարայ կ'ուզէ. ճորով թէ կու հաւընցնես. եթէ խելացի ես՝ ութը մանղրրն շուտով կու տաս. մուտ'ի նըներս, մութ նեղ տեղ և մերտիվէնների աշըռմիշ[2] եղած, վախն 'ի վախն կու իջանես՝ մինչև 'ի վայր պատերն բռնելով. կու իջանես փոքր տեղ մի և կայ անդ սեղան որ տարած մոմն անդ կու տան, և չամպուրն.? ապա նոպէթի նայիս նէ՝ չեղած է. երկու ոտք վայր իջանես, նեղ է մէկ մարդ անճախ կու մտանէ. և 'ի պատին տակն է գերեզմանն, համբուրես. և ունի քէմէր և պատուհան երեք. շուտով դարձիր յետ. զիրա տաքէն շապիքդ կու թըրջի, ունի եօթն և տասն ոտք մերտիվէն. եթէ ծարաւ ես ֆէլլահին տըղաքն փարչն ձեռին ունելով՝ առաջ զմանղրրն կ'առնէ, ապա կու տայ որ խըմես ։

Եւ անտի գնացաք Համբարձում. իբրև մօտեցաք, մոմճին հեռու կու նստի կու սպասէ կու ծախէ միւսն ձեռացդ կու առնէ. և յառաջ երթաս երկու խոշոր քար մէկզմէկի կից, որ անդ կերան խորոված ձուկ և խորիսխ մեղու. և ըզհայր մերն ուսոյց աշակերտացն և անդ ևս զինն երանութիւն ասաց ։ Եւ ապա կ'ելանես չորս ոտք մէրտիւէն, և կու ի-

1 Բռնութեամբ ։
2 Մաշած ։

ջանես չորս ոտք մէրտիւէն և ունի դաւիթ մի մեծ. և անդ է չէխին տանը դուռն. անդ ֆէլլահին և չէխն կանգներ են առ դրան, կու ելանես վեր չորս ոտք, և տաս փարան, մըտնես ներս կու իջանես չորս ոտք վէրտիւէն 'ի վայր. երկայնութիւն երեսունևհինգ ատըմ, և լայնութիւն քառասուն և մէկ ատըմ. մէջ տեղն ղուպպէն, դուռն մարդաչափ և լանքըն երեք թիզ. ներս մուտ եղբայր, լայնքն ութ ատըմ միւռնէպէր[1]. Քրիստոսի ոտնատեղն երկանքն երեք թիզ, և լանքն երկու թիզ փոս. կայ մէնպէր մի հինգ մանար քէմերով. բարձըր տեղն ունի ութը պատուհան գոց, մեծ ղուպպէ մի, դրսի դիհն ունի ութը քէմէր և ութը ոտք, լայնքն իրեք թիզ. ամէն օտաց երկու քով մէկ մէկ բարակ մէրմէր սիւն որ կ'անէ ընդ ամէնն վեչտասան սիւն. գլխըտիքն օյմայ պաչըլըք. և յետոյն ունի ութը սեղան. Հայու, Հոռմի, Ֆռէնկի, Ասորու, Ղպտու, Հապէշու, Սիւրեանու, կուռճու. և կայ դրան քովն մինարէ մի, և աջ կողմն չէխին օտան բարձր հինգ բէնճերէ, համբարձման վերա կու հայի: Եւ ելանելն 'ի դուրս և գնան անդ ուր գհայր մերն ուսոյց աշակերտացն, և անդ ևս զինն երանութիւն ուսոյց, և տեղին ուր ըղխորխսխ մեղուն կերաւ առ աշակերտսն իւր յաւուր համբարձման. երկու խոշոր քար է քովէ քով, և կու համբուրես. և անտի վայր վէմն յորոյ վերան նստաւ յանդիման տաճարին:

Կը շարունակուի:

ՀԱՆԴԷՍ ՀԱՐՍԱՆԵԱՑ

Մուշ գաւառին մէջ.

Մշոյ երկիրը սովորաբար մանչերը տասներեօթէն ինչուան քսան տարեկան կը կարգեն. առ առաւելն՝ քսանուերկու, քսանուհինգն կարգէ դուրս կը սեպուի: Իսկ աղջիկները սովորաբար տասուերկուքէն ինչուան տասնուհինգ տարեկան. տասնումէկն ալ սովորականէն հեռու չէ. անկէ վար կարգէ դուրս սեպուած է. տասնուվեցը քիչ կ'ըլլայ, տասնուեօթն ալ դեռ յուսահատելի չէ. բայց անկէ անդին անցածը ալ յօռ կը կոչուի: Իսկ նշանուիլը դեռ աւելի փոքր հասակի մէջ կ'ըլլայ երբեմն, բայց հարսնիքէն համար կը սպասեն:

Արդ նշանելու և հարսանեաց առաջին արարողութիւնն է Ուզընկեալ, Ուզել բառէն ելած՝ որով կ'իմացուի հարս ուզելը: փեսին հայրը իւր բարեկամները հրաւիրելով՝ աղջկան հօր տունը կ'երթան. աղջկան հայրն ալ արդէն գիտնալով աս բանն՝ իւր ազգականները տունը ժողված է, ու ամէնքը մէկտեղ եկած այլևայլ խօսակցութիւններ մէջ կը բերեն երկայն ատեն՝ ծուխ քաշելով: Վերջապէս խօսքը կը դարձընեն իրենց գալուն պատճառին վրայ: Աղջկան հայրը՝ թէպէտ և աղջիկը տալու հաւանեալ ալ ըլլայ՝ այնչափ ծանրէն կը քաշէ, որ գոնէ երեք գիշեր այս արարողութիւնը կը կրկնուի: Վերջի գիշերը երբոր ալ ամէն բան պիտի լմընցընեն, աղջկան հայրը՝ Աղջիկս մօրն եմ տուած, կ'ըսէ. մայրն ալ որդւոցն կամ բարեկամներէն մէկուն կու տայ. և այսպէս մէկը մէկալին տալով, հուսկ վերջինն ալ, փեսին անունը տալով (ըսենք թէ ըլլայ Գրիգոր), «Ես ալ Գրիգորին տուի գնաց» կ'ըսէ, բանը կը լմըննայ: Այն ատեն փեսին հայրը նոր խնամւոյն ձեռքը կը պագնէ. և ահա լրտեսներ՝ որ դուռն ու երդիքը կը սպասեն, յանկարծ դէպ 'ի փեսին տունը կը վազեն, «Եղաւ, եղաւ. զիմ ռնկրակրլէն[1]» ըսելով. այսինքն, կատարեցաւ, աւետիք տալուս վարձքը (տուր). գոհ կ'ընեն զանոնք: Այն ատեն նոր հար-

[1] Ըռկած, կոխած:

[1] Սովորութիւն է հոն տեղուանք երբեմն ամէկ լուր մը տալու ատեն ականջը բռնել՝ ինչուան որ վարձք մը խոստանայ. ուստի Կաշնամ և Աչանչ բառերէն ելած է այս բառը: